

<https://doi.org/10.59982/18294359-23.14-to-12>

Գուրգեն Անուշավանի Գևորգյան

բ.գ.թ., պրոֆեսոր

ԵՊՀ, Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոն

faridakhachatryan@gmail.com

Անփոփագիր

Հայ թարգմանական միտքը՝ իր ուրույն ավանդույթով, բոլոր ժամանակներում հավուր պատշաճի է արձագանքել համաշխարհային լեզվամշակութային իրողություններին՝ քերթողական մտքի և բանարվեստի լավագույն նմուշները հասանելի դարձնելով հայ ընթերցողին: Դրա շնորհիվ մեր մշակութային իրականության սեփականությունն են դարձել բազմաթիվ գլոխգործոցներ, որոնք գրվել են աշխարհի տարբեր լեզուներով, իսկ հետո այնպես են հնչել հայերեն, ասես հենց այդ լեզվով էլ գրված լինեին: Անցյալի թարգմանական գործընթացը շարունակվում է նաև արդի ժամանակաշրջանում, որով հայերենի լեզվամշակութային իրականությունն են ներմուծվում գաղափարական ու գեղագիտական ոլորտների նոր, հայեցակարգային նշանակություն ունեցող միտումները: Այս ամենը հստակորեն հասկանալու և բնութագրելու առումով շատ կարևոր է իմանալ, որ վերջին տարիներին թարգմանությունը՝ որպես ելք դեպի մյուս լեզվամշակույթները և որպես այդ լեզվամշակույթների ընկալում կամ հայերենացում, դիտարկվում է իբրև մեկնաբանություն կամ մեկնաբանության արտահայտություն:

Թարգմանական արվեստի տեսաբաններն ու վերլուծողները բազմիցս անդրադարձել են գեղարվեստական գործը մի լեզվից մյուսին փոխանցելիս ծագող այլևայլ դժվարություններին և հարակից հանգամանքներին: Սակայն այդ ամբողջական համակարգում առանձնակի կարևոր է ընդունող լեզվի հանգամանքը: Գերակա է՝ արդյոք ընդունող լեզուն հնարավորությունն ունի՞նք՝ է թարգմանչին հավուր պատշաճի վերարտադրելու ստեղծագործողի խոհական-երևակայական, անշուշտ նաև լեզվական աշխարհը: Մեր լեզվի ճկունությունը և նաև մերազնյա թարգմանիչների ձիրքն ու ճկունությունը ընձեռում են նման հնարավորություն:

Հիմնաբառեր. Թարգմանական միտք, մշակութային իրողություն, հնչել հայերեն, արդի ժամանակաշրջան, ներմուծել, բնութագրել, մեկնաբանություն:

Ներածություն

Հայ թարգմանական միտքը, իր հինավուրց թարգմանական ավանդույթներով, բոլոր ժամանակներում մասնակցել է համաշխարհային լեզվամշակութային իրողություններին՝ ինքնուրույն՝ հայերեն ստեղծագործություններով: Առաջին հայ թարգմանիչները, որ

հայերենի են վերածել Աստվածաշունչը [Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, 382] սկիզբ են դրել հայ քրիստոնեական մշակույթին և մեկնաբանական գրականության հետագա ծավալմանը: Այդ հենքի վրա ստեղծվել են լեզվամշակութային ինքնուրույն ստեղծագործություններ (Մեսրոպ Մաշտոցի և Սա-

հակ Ա Պարթևի շարականները, Եփրեմ Ասորու աղոթքները, հայ պատմիչների երկասիրությունները, Գրիգոր Նարեկացու տաղերն ու «Մատյան ողբերգության» պոեմը, Ներսես Շնորհալու և Նահապետ Զուլակի և միջնադարյան մյուս տաղերգուների ստեղծագործությունները):

Հայ թարգմանական միտքը մշտապես արձագանքել է համաշխարհային մտքի և բանարվեստի հայկականացմանը՝ թարգմանության միջոցով, որի շնորհիվ հայ մշակութային իրականության սեփականությունն են դարձել բազմաթիվ գլոխագործոցներ, որոնք գրվել են աշխարհի տարբեր լեզուներով (հունարեն, եբրայերեն, իտալերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն և այլն)՝ հին ժամանակներից սկսած՝ մինչև նոր և նորագույն ժամանակները: Հայոց մշակութային միտքը յուրացրել է համաշխարհային գեղարվեստական մտքի մեծագույն նվաճումները (Հովհ. Մասեղյանի թարգմանությունները՝ Շեքսպիրից, Դանտեի «Աստվածային կատակերգության» թարգմանությունը՝ Սրբուն Տայանի միջոցով, Սերվանտեսից, Չ. Դիքենսից, Ջ. Բայրոնից և բազմաթիվ այլ գրողներից կատարված թարգմանությունները): Թարգմանական այս բուն և անկասելի գործընթացը շարունակվում է նաև արդի ժամանակաշրջանում, որով հայերենի լեզվամշակութային իրականությունն են ներմուծվում գաղափարական ու գեղագիտական ոլորտների նոր, հայեցակարգային նշանակություն ունեցող միտումներն ու տենդեցները:

Այս ամենը հստակորեն հասկանալու և բնութագրելու առումով շատ կարևոր է իմանալ, որ վերջին տարիներին, թարգմանությունը, որպես «եթ՝ դեպի մյուս լեզվամշակույթները և որպես այդ լեզվամշակույթների յուրացում կամ հայերենացում, դիտարկվում է իբրև մեկնաբանություն կամ մեկնաբանության արտահայտություն: Այսօրինակ ընկալումը մեկնար-

կում է, հիմնականում, թարգմանաբանական այն դրույթից, որ յուրաքանչյուր թարգմանությունն իրենից ներկայացնում է մի ուրույն նշանագիտական վերլուծություն, այսինքն՝ տվյալ որևէ թարգմանությամբ ներկայացվում է բնագրով արտահայտված լեզվաոճական որոշակի մի կողմ, որը յուրատեսակ կերպով է արտահայտվում թարգմանական լեզվով՝ ի ցույց դնելով թարգմանության ներլեզվական, միջլեզվային և միջնշանային տիպերը: Եվ եթե ներլեզվական թարգմանությունը միևնույն լեզվում առկա լեզվական նշանների մեկնաբանությունն է՝ այլ նշանների միջոցով, միջլեզվական թարգմանությունը օրինակ, անգլերենից՝ հայերեն, մեկ լեզվի լեզվական նշանների մեկնաբանությունն է՝ մեկ այլ լեզվի լեզվական նշանների միջոցով, իսկ միջնշանային թարգմանությունը լեզվական նշանների մեկնաբանությունն է՝ արտալեզվական նշանների միջոցով, դրանով իսկ հղում է կատարվում դեպի բնագրի համապարփակ ուղղաձիգ համատեքստի առկայությունը [Гюббечет]: Այդ ուղղաձիգ համատեքստի առկայությամբ է պայմանավորված գեղարվեստական ստեղծագործությունների (դիցուք, Ջ. Ջոյսի «Դուրլինցիներ»-ի և «Ուլիսես»-ի, կամ Թ. Էլիոթի «Բանաստեղծություններ»-ի) գաղափարական, գեղագիտական և լեզվաոճական շերտերի փոխկապակցվածությունը, դրանց օրգանականությունը: Դ. Հ. Համբարձումյանը, խոսելով այդ մասին, նշում է.

Բնագրի և թարգմանության նշանագիտական քննությունը պարտադրում է այդ համապարփակ ուղղաձիգ համատեքստի ուսումնասիրություն, այսինքն՝ մի կողմից՝ տվյալ հեղինակի երկերի մասին ընթերցողի նախագիտելիքը (հենքային գիտելիքը), որն ընդգրկում է այդ երկերում պատկերված հասարակական-սոցիալական կացութաձև(եր)ի, նրանց բնորոշ հայացքների, հասկացությունների, պատկերացումների և գնահատությունների

համակարգը (Ի. Գյուբբենտի սահմանումն է) [Гюббент, 39], մյուս կողմից՝ տվյալ ստեղծագործության մեջ նկարագրված ժամանակաշրջանին բնորոշ բարոյագեղագիտական արժեքների վերհանումը և այն նախագիտելիքը, որը թույլ կտա հասկանալ երկի գեղարվեստական մտահղացումը և պատկերային համակարգը (Ն. Կատինենեի սահմանումն է) [Катинене, 16 стр.] և արտալեզվական նշանների օգնությամբ դրանց վերստեղծում թարգմանվածքի մեջ՝ թարգմանող լեզվի լեզվական նշանների միջոցով: Այսպիսով, կարելի է հանգել այն եզրակացության, որ գեղարվեստական թարգմանությունը (հատկապես գեղարվեստական տեքստն ու նրա թարգմանվածքը) ուսումնասիրվում է բանասիրական հերմենևտիկայի լույսի ներքո՝ որպես նշանագիտական մեկնաբանություն [Ջամբարձումյան, 2017:63]:

Ժամանակակից, արդիական սուր մտածողությամբ օժտված այնպիսի գրողներ, ինչպիսիք են Ջ. Ջոյսը և Թ. Էլիոթը, բնութագրվում են նախևառաջ, հարուստ, կարելի է նույնիսկ ասել, բազմահարուստ ուղղաձիգ համատեքստերի առկայությամբ, որով պայմանավորված, նրանց խոսքում բառը հաճախ ձեռք է բերում «անոմալիկ շեղումներ»՝ գրական լեզվում (անգլերենում) ամրակայված բառային, ձևաբանական ու շարահյուսական օրինաչափություններից, արտահայտելու համար արդիական իրականության արտաբերող, մարդկանց պարադոքսալ հոգեվիճակների առկայությունը, ձևի և բովանդակության խզումը՝ սոցիալ-հոգեբանական կյանքի և կեցության տարբեր ասպարեզներում: Այդօրինակ «խզումները», հակասական և պարադոքսալ իրավիճակների բառային, լեզվաոճական արտահայտումները բազմապիսի են, բազմատեսակ և ենթակա ծավալուն քննարկումների ու մեկնաբանությունների: Այս առումով, հարկ է անդրադառնալ լեզվաոճական այնպիսի մի

երևույթի, ինչպիսիք են՝ ջոյսյան և Էլիոթյան դարձվածքները, հատկապես աստվածաշնչային ծագում ունեցող որոշ դարձվածքների կիրառումներին, նշելով, որ դրանք, այդ դարձվածային կիրառումներն ունեն արտալեզվական մի այնպիսի իրականություն, որը կազմում է հենց այդօրինակ կիրառումների ուղղաձիգ համատեքստը: Առաջին հերթին նկատի ունենք նման դարձվածքների (դրանց կիրառության) ցուցադրական կամ անսիրտ մեքենայական կիրառումը, հոգևոր ճշմարիտ ապրումի, անկեղծության բացակայության խորհրդանշումը: Նման մեքենայական կիրառումները գրական կերպարների կողմից վերածվում են տվյալ հեղինակի գեղարվեստական միտումն իրականացնող յուրօրինակ տարրերի: Բերենք Ջ. Ջոյսի «Դուբլինցիներ» պատմվածաշարից մի օրինակ՝ «Counterparts» - «Կրկնակը» պատմվածքից.

His life would be a hell to him,
Could he not keep his tongue in his cheek? [p. 65]

Կյանքն իսկական դժոխք կդառնա:
Լեզուն չէ՞ր կարող իրեն քաշել: [Էջ 60]

Քանի որ յուրաքանչյուր լեզվի հետևում կանգնած է լեզվամշակութային որոշակի ավանդույթ, որը կազմում է տվյալ լեզվաոճական միավորների կերպը պայմանավորող գլոբալ ուղղաձիգ համատեքստը, ապա կարող ենք ասել, որ տվյալ դեպքում ևս որոշակի նրբիմաստային տարբերակվածություն է նկատվում hell to him («դժոխք կդառնա») աստվածաշնչային հենք ունեցող դարձվածքի և սոմատիկ բնույթի և հայերենի «Լեզուն չէ՞ր կարող իրեն քաշել» դարձվածքի բնագրային տարբերակի միջև: Անգլերենում, ընդ որում, այս սոմատիկ դարձվածքը ավելի շատ նշանակում է «Leap from somebody's tongue» - լեզվից թռչել - ռուսերեն՝ «Слетать с языка», մինչդեռ հայերենում այն նպատակահարմար է համարվել թարգմանել «Լեզուն իրեն քաշել»

ձևով, որը առավել հատուկ է հայերենի ավանդական լեզվամտածողությանը [Ղազարյան]:

Բերենք մեկ այլ օրինակ.

He went through the narrow alley of Temple Bar quickly, muttering to himself that they could all go to hell [p. 65].

Արագ-արագ քայլեց Թեմփլ-Բարի նեղ անցուղիով, քթի տակ փնթփնթալով և գրողի ծոցը ուղարկելով բոլորին (էջ 61):

Ինչպես տեսնում ենք՝ անգլերենի դժոխքը հայերենում դարձել է «գրողի ծոցը», որը ավելի է բնորոշ հայերենի դարձվածամտածողությանը: Իսկ բնագրի “muttering to himself”-ն հայերենում ավելի է սաստկացել՝ «քթի տակ փնթփնթալով» արտահայտությամբ, որը նույնպես կարող է կախված համատեքստային նշանակությունից հանդես գալ որպես դարձվածք: Բերված օրինակների վերլուծությունը ցույց է տալիս, որ գեղարվեստական տեքստը կազմող լեզվական միավորները, մասնավորապես կայուն կապակցությունները, որպիսիք են տարաբնույթ դարձվածքները, սերտորեն կապված են ինչպես լեզվամշակության անցյալի և ավանդույթի հետ, այնպես էլ գրողի անհատական ոճի և ողջ ստեղծագործության գաղափարի հետ: Անշուշտ, խոսքը գեղագիտական որոշակի արժեք ունեցող լեզվական միավորների մասին է, առանց որի՝

1) լեզվական առանձին միավորը չի կարող լինել ընդհանուր գաղափարի արտահայտություն (լավ է ասել՝ ցուցիչ),

2) իսկ այդ ընդհանուր գաղափարը չի կարող, իր հերթին, դրսևորվել առանց լեզվական միավորների:

Ինչպես նշում են տեսաբանները՝ գեղարվեստական ստեղծագործության համատեքստում լեզվական առանձին միավորները ստանում են տվյալ բովանդակությանը բնորոշ ոճ՝ արտացոլելով գաղափարի և նրա դրսևորման փոխհարաբերությունը՝ սերտ, օրգանական

կապը ամբողջի և մասի, գեղարվեստական ձևի և բովանդակության, գլոբալ ուղղածից համատեքստի և նրա լեզվական նշանը հանդիսացող լեզվաոճական միավորների (դարձվածք, խորհրդանշան, փոխաբերություն, մակդիր և այլն) միջև:

Ուստի գեղարվեստական երկի լեզվի ուսումնասիրությունը, այդ լեզվին հատուկ լեզվաբանաստեղծական արժեքի վերահանումը չի կարող իրականացվել առանց քերականական ձևաբանաշարահյուսական կառուցվածքների և դրանց ձեռք բերած այլիմաստային նոր երանգավորումների ուսումնասիրման [Виноградов], [Будагов], [Кухаренко]: Այլ կերպ ասած, ստեղծագործության ողջ համատեքստի և լեզվաոճական առանձին միավորների միջև եղած «համագործակցությունը» վերջիններիս օժտում է կողի արժեքով. դրանք, կամա թե ակամա, ձեռք են բերում խորհրդանշական գործառույթներ, ի վերջո՝ հանդես են գալիս որպես գեղարվեստական խորհրդանիշներ և դարձվածքներ: Տվյալ լեզվական կամ լեզվաոճական միավորի՝ գեղարվեստական խորհրդանիշի կամ դարձվածքի վերածվելու գործընթացը ինքնին հետաքրքիր է թե՛ լեզվաբանական, թե՛ գրականագիտական առումներով: Լեզվաբանական առումով հետաքրքիր է, թե ինչպես է տվյալ լեզվական միավորը որոշակի համատեքստում ձեռք բերում նախ փոխաբերական, ապա և խորհրդանշանական արժեք, իսկ գրականագիտական առումով հետաքրքրություն է շարժում լեզվական տվյալ միավորի ոճական արժեքը՝ կապված գրականագիտական ուսումնասիրման այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են գրողի աշխարհայացքը, երկի բովանդակությունը և ձևը, ժանրային պատկանելությունը, ժամանակի ու տարածության արտահայտման կերպը և այլն:

Գեղարվեստական ստեղծագործությունը (տվյալ դեպքում՝ Ջ. Ջոյսի «Դուբլինցիներ»

(հայ. թարգմ.՝ 1978) պատմվածաշարը, որպես ներքին աղերսներով միմյանց կապված պատմվածքների ամբողջություն և «Ուլիսես» (հայ. թարգմ.՝ 2012) վեպը) ամբողջական կառույց է, որը փոխհարաբերվում է տեքստը կազմող առանձին միավորների հետ. ավելին, ինչպես նշում են որոշ լեզվաբաններ՝ նշյալ միավորները ոչ միայն փոխհարաբերվում, այլև փոխներգործում են, այսինքն՝ իրենց մեջ կրում են ամբողջական երկի թելադրությամբ պայմանավորված իմաստներ, այլիմաստներ և համապատասխան ռիթմահնչերանգային երանգավորումներ. գործոններ, որոնք իրենց հերթին ներգործում են երկի ողջ համատեքստի վրա՝ երանգավորելով ասելիքը: Երկկողմանի փոխներգործության պարագայում, բնականաբար, փոփոխություն են կրում նաև գեղարվեստական պատկերի մեջ ներգրավված՝ ժողովրդական-բանահյուսական տեքստերից, դիցաբանությունից կամ Սուրբ Գրքից փոխանցված խորհրդանշները, որոնք կամ օժտվում են իմաստային ու հուզական նոր երանգավորումներով կամ էլ փոխակերպվում են առավել մեծ չափով, երբեմն ձեռք բերելով հավելյալ իմաստներ՝ կապված համատեքստային յուրահատկությունների հետ, ուշագրավ հանգամանք՝ խորհրդանշական պատկերների ուսումնասիրման առումով:

«Գեղարվեստական խորհրդանշի ընկալման և մեկնաբանման ողջ դժվարությունն այն է, - նշում է Մ. Ս. Սարգսյանը, - որ ընթերցողի համար իրականում բարդ է ուղիղ կապ հաստատել ստեղծագործության բառային մատերիայի և ստեղծագործության բուն բովանդակության ու հեղինակի նպատակադրման միջև» [Սարգսյան, 2007:47], քանի որ գեղարվեստական խոսքի համատեքստում բառն ընդլայնում է իմաստային իր շրջանակներն ու այլևայլ զուգորդումների շնորհիվ հարստանում նորանոր սերտաճումներով. այդ ամենը ընկալելու և համակողմանիորեն բնութագրե-

լու համար, ինչպես և քանիցս նշվել է, կիրառվում է գեղարվեստական լեզվի ուսումնասիրման լեզվաբանաստեղծական մեթոդը [Гаспарян]: Նպատակն է բառի ոչ միայն իմաստային ու վերնշանային, այլև գաղափարական վեր-վերնշանային մակարդակի վերհանումը՝ մեկնարկելով լեզվաոճական ու լեզվաբանաստեղծական վերլուծությունների միջև եղած դիալեկտիկական միասնության փաստից, հաշվի առնելով նաև ստեղծագործության գլոբալ ուղղահայաց համատեքստը [Гюббегет], որը ուղենշային է գեղարվեստական խորհրդանշի՝ նրա արքեստիպային կամ ոչ արքեստիպային սուբյեկտիվ-հեղինակային բնույթը ճանաչելու համար: Այստեղ հետազոտողները առաջ են քաշում «լիաճանաչ» ընթերցողի կամ թարգմանչի գաղափարը, ինչպես նաև այն էական տեսությունը, որ յուրաքանչյուր թարգմանություն մի յուրօրինակ ելք է դեպի բնագիր տեքստը՝ այն մեկնաբանելու նաև նրա թարգմանական ճշգրիտ «հոմանիշը» առաջարկելու առումով:

Այդօրինակ «թարգմանական ճշգրիտ հոմանիշներ են» նաև «Ուլիսես» վեպի դարձվածքների հայերեն թարգմանությունները (թրգմ.՝ Ս. Մկրտչյան), ինչպես նաև այլուզիայի՝ գրական անդրադարձների (հիմնականում Աստվածաշնչից) հայերենացումները:

Խորհրդանշանային այսօրինակ իմաստավորումների կարելի է հանդիպել «Ուլիսես»-ի շատ հատվածներում, որտեղ աստվածաշնչային հասկացությունները, իրակությունները, կրոնական հարանվանությունները և դրանց ներկայացուցիչների թվարկումներն ու կրկնությունները, ինչպես նաև եկեղեցական-սակրալ սպասքեղենի և զգեստների անունները նոր բովանդակությամբ և ոճական նոր երանգավորումներով են հանդես գալիս գաղափարագեղագիտական նոր համատեքստում: Այսպես՝

O'Dignam, Sun of our morning. Fleet was his foot on the bracken: Patrick of the beamy brow. Wail, Banda, with your wind: and wail, a Ocean, with your whirlwind.

- *There he is again, says the citizen, staring out.*

- *Who? Sais I.*

- *Bloom, sais he. He's on point duty up and down there for the lost ten minutes.*

And, begob. I Saw his physog do a peep in and then slider off again.

(Ulysses, 2012, p. 299-300)

Օ՛րհիզնեմ, մեր լուսաբացի արև: Արա՛գ քայլեցին նրա ոտքերը՝ ձարխտտի վրա, պայծառադեմ Փաթրիք:

Ողբա՛, ով Բանբա, քո քամիներով ողբա՛, ո՛վ Օվկեան, քո պտտահողմերով:

- *Էլի ինքն է, այ մարդ, - ասում է Քաղաքացին՝ դուրս նայելով:*

- *Ո՛վ, - հարցնում եմ:*

- *Բլումը, - ասում է, - Տասը թույլ եղավ՝ Էստեղ միացու պես հերթապահություն է առնում: Հա, էլի, նայեմ՝ դրա քիթումռուլթն երևաց ու գոլորշիացավ:*

[Ուլիսես, 2012:281-282]

Բերված հատվածում հնարավոր է տեսնել միջտեքստային տարատեսակ ներթափանցումներ, գնահատել այդ տեքստն իբրև ավանդույթային-շրջանառու տարրերի և հեղինակային նորամուտությունների արտահայտություն [Холодная]:

Հետաքրքրական են / Saw his physog do a peep in (դրա քիթումռուլթն երևաց) փոխանվանական դարձվածքի և then slider off again (գոլորշիացավ) փոխաբերությունը:

Ժամանակակից, արդիական հնչողություն ունեցող պոեզիայի ներկայացուցիչներից է Թ. Ս. Էլիոթը: Նրա բանաստեղծություններում (հայ. թարգմ.՝ Ս Սկրոչյան) ևս առկա են բազմաթիվ դարձվածքներ, աստվածաշնչյան այլուզիաներ և յուրօրինակ, հաճախ անսպասելի՝ բանաստեղծական մեկնաբանու-

թյուններ, որոնք վերաբերում են աստվածաշնչյան բառ ու բանի հայտնութենական և համեմատաբար նորահայտ ընկալմանը:

*If the lost word is lost, if the spent word is spent
If the unheard, unspoken*

Word is unspoken, unheard;

*Still is the unspoken word, the Word unheard,
The Word without a word, the Word within
The world and for the world;*

And the light shone in darkness and

Against the Word the unstilled world still

whirled

About the centre of the silent Word.

O my people, what have I done unto thee.

Եթե կորած բառը կորած է, սպառված բառն՝ սպառված

Եթե չսված ու չասված

Բառը չասված է, չսված.

Անբառ է չասված բառը, Բառը չսված,

Բառը բառից դուրս, Բառն աշխարհի մեջ

Կամ հանուն աշխարհի

Եվ լույսը մթնում շողշողաց անշեջ

Եվ ընդդեմ Բառի պտտվեց աշխարհն ան-

բառ

Կենտրոնի շուրջը անբարբառ Բառի:

Ով իմ ժողովուրդ, ես քեզ ի՞նչ եմ արել:

Բերենք մեկ այլ օրինակ, որով բանաստեղծորեն և մեկ այլ լույսի ներքո է դիտարկվում Քրիստոսի խաչելության, մարդու առաքելության և եկեղեցու խորհուրդը.

But the man that is will shadow

The man that pretends to be.

And the Son of Man was not crucified once for all,

The blood of the martyrs not shed once for all,

The lives of the Saints not given once for all:

But the Son of Man is crucified always

And there shall be Martyrs and Saints.

And if blood of Martyrs is to flow on the steps

We must first build the steps:

And if the Temple is to be cast down

We must first build the Temple.

Բայց մարդը, որ կա, կստվերի
Այն մարդուն, որ ձևացնում է, թե կա:
Եվ Որդին Մարդու չխաչվեց հավիտյանս,
Նահատակների արյունը չթափվեց հա-
վիտյանս,

Սրբերի կյանքը չտրվեց հավիտյանս.
Այլ Որդին Մարդու խաչվում է առմիշտ,
Եվ միշտ կլինեն նահատակներ և սրբեր:
Եվ եթե նահատակների արյունը թափվե-
լու է աստիճանների վրա,

Նախևառաջ պարտ ենք աստիճաններ
շինել:

Եվ եթե Տաճարը փլվելու է մի օր,
Նախևառաջ պարտ ենք մի Տաճար շինել:

Եզրակացություն

Ինչպես տեսնում ենք անգլերենի Word-ը,
ըստ հայալեզու Աստվածաշնչի ավանդույթի
թարգմանված է Բան: Անգլերենի և հայերենի
համեմատությունից կարելի է մակաբերել, որ
դրանք, հուշելով մեզ լեզվամշակութային տար-
բեր ավանդույթների փաստը, մեսիջ տալով այդ
մասին, միաժամանակ լրացնում և մեկնում են
միմյանց, ընդգծում բառի, խոսքի և բանի նույ-
նությունը՝ աստվածաշնչորեն խոսելիս:

Նորովի, ավելի ստույգ՝ առավել առարկա-
յորեն, առավել ճշգրտորեն է ձևակերպվում
մարդ արարածի և Աստծո Որդու փոխհարա-
բերության խնդիրը. մարդ էակը թող չձևաց-
նի, թե ինքը միշտ կա ու կա. ճշմարիտ մարդը
կստվերի, կնսեմացնի նրա գոռոզ նկրտումնե-
րը, իսկ մարդու Որդու (մարդեղացյալ Յիսու-
սի) խաչելությամբ մշտապես լինելու են «նա-
հատակներ և սրբեր» քանդվում են սովորու-
թային, ավանդութային տաճարները և այդ
փլվածքների վրա կառուցվելու է իսկական,
երկնային Տաճարը, որ մարդն է:

Ծանոթագրություններ

1. Ջեյմս Ջոյսը (լրիվ՝ Ջեյմս Ավգուստին Ա-
լյոյզիուս Ջոյս) ծնվել է 1882-ին, իռլանդական

բարեկեցիկ ընտանիքում, կրթվել իռլանդա-
կան կաթոլիկականության և իռլանդական
ազգայնականության ոգով: Յետագայում նա
քննադատաբար է մոտեցել դրանց: Սովորել է
Քրիստոնյա եղբայրներ քոլեջում և այլուր, տի-
րապետել բազում լեզուների: Նրա հոգևոր ու-
ղեկիցներն են եղել Դանտեն, Իբսենը, Մե-
տերլինկը, Յառուպտմանը: Վախճանվել է
1941-ին, Ցյուրիխում: Նրա գերեզմանը պատ-
ված է կանաչ ճյուղերից հյուսված Իռլանդիայի
խորհրդանիշով: Նա նորարար է համաշխար-
հային առումով, ով երկյուղ է տածել հերոսա-
կանության կուռքի հանդեպ, կոչ է արել մարդ-
կանց և ազգերին՝ արթնանալ հերոսականու-
թյան, պատմականության մղձավանջներից,
լինել ազգասեր, բայց ոչ ազգայնամոլ: Նա իր
գրականությամբ ներկայացրել է արդի հասա-
րակությունների հոգեկան վիճակը, կոչ է արել
ազատագրվել նորօրյա կռապաշտական մի-
ֆերից, քայլ կատարել դեպի մոդեռնիզմը:
Նա, ինչպես նշում են հետազոտողները, ցույց
տալով ներկա ժամանակի տարրալուծված վի-
ճակը, իր մեջ կրում է վաղնջական ժամանակ-
ներից եկած հրաշալի երգեցողության նման
մի բան, որը կարծես կոչված է նպաստելու
մարդ արարածի պայծառակերպմանը: Նրա
բազում գործերից հայերեն են թարգմանվել
«Դուբլինցիներ»-ը և «Ուլիսես»-ը:

2. Թոմաս Սթըրնս Էլիոթը ծնվել է 1888-
ին, ԱՄՆ-ի Սընթ Լուիս քաղաքում: 1927-ից
դարձել է բրիտանահպատակ: Նրա հոգևոր
սյուններից մեկն է եղել Դանտեն, որից նա ժա-
ռանգել է մտքի և զգացմունքի ընդելուզումը
միմյանց մեջ: Նրա պոետական արտահայտ-
չամիջոցները նոր են, թարմաշունչ, պատկեր-
ները՝ յուրօրինակ, թեմատիկան՝ ազատ: Նա,
ինչպես բնութագրում է նրան թարգմանիչը
(Ս. Մկրտչյան) իր պոետական հայացքով
ընդգրկուն է, այլասացության հակամետ, ինչ-
պես նաև, այլասացությամբ հանդերձ, միշտ
ճշմարտապատում և թիրախին խփող: Նրա

ժողովածուներից են՝ «Փրոֆորոս և այլ դիտումներ»-ը (1917), «Նախերգեր»-ը (1910), «Յիսուսերիա»-ն (1915), «Բանաստեղծություններ»-ը, «Սոխրոց Չորեքշաբթին» և այլն: Վախճան-վել է 1965-ին: Նա հանգչում է Իսթ Բոուլքրի Սթ Միքայել եկեղեցու բակում: Տապանագիրը իր իսկ խոսքերն են՝ «Իմ վերջի մեջ իմ սկիզբն է»:

Գրականության ցանկ

1. Էլիոթ Թ. Ս., Բանաստեղծություններ, Երևան, 2014, 375 էջ:
2. Համբարձումյան Դ. Հ., Գեղարվեստական ստեղծագործությունը որպես բանասիրական համալիր քննության առարկա, Բ. գ. դ.ատենախոսություն, Լինգվա, Երևան, 2008, 267 էջ:
3. Հարությունյան Ա. Մ., Դուրբինցիներ (Ջ. Ջոյս), «Սովետական գրող», Երևան, 1978, 160 էջ:
4. Ղազարյան Հ. Չ., Մարմնի մասերի անվանումներով հայերեն-ռուսերեն-անգլերեն դարձվածքաբանական բառարան, Երևան, 2010, 576 էջ:
5. Ջոյս Ջ., Ուլիսես, հեղին. հրտ., Երևան, 2012, 693 էջ:
4. Սարգսյան Մ. Ս., Գեղարվեստական խորհրդանիշը որպես հեղինակի անհատական ոճի բաղկացուցիչ տարր, Բ. գ. թ.ատենախոսություն, Երևան, 2007, 155 էջ:
5. Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան (տե՛ս թարգմանչաց շարժում հոդվածը՝ էջ 382), Ս. Էջմիածին, 2002, 1070 էջ:
8. Joyce's J., Dubliners, Wordsworth Editions Limited, 1993, 170 p.
9. Будагов Р. А., Что может дать наука о языке и литературе? // Филология и культура, МГУ, Москва, 1980.
10. Гаспарян С. К., Лингвопоэтика образного сравнения, изд. “Лусакн”, Ереван, 2008, 180 стр.
11. Гюббенет И. В., Основы филологической интерпретации литературно-художественного текста., МГУ, Москва, 1991, 205 стр.
12. Виноградов В. В., Стилистика. Теория поэтической речи. Поэтика, изд. Акад. наук СССР, 1963, 254 стр.
13. Катинене Н. Ф., Глобальный вертикальный контекст романов Томаса Гарди: автореферат кандидата филологических наук, Москва, 1983, 16 стр.
14. Кухаренко В. А., Лингвистическое исследование английской художественной речи, Одесса, 1973, 60 стр.
15. Холодная А. Л., Оказиональное стилистическое использование грамматических категорий в фразеологических единицах в современном английском языке, автореф. дисс. кандидата филологических наук, Москва, 1973, 17 стр.

TRANSLATION AS A MEANS OF LINGUO-CULTURAL INTERACTION

Gurgen Gevorgyan

*PhD in Philology, Professor
YSU, Chair of Translation Theory and Practice
faridakhachatryan@gmail.com*

Abstract

The Armenian translation, with its own traditions, has always responded in a proper way to the world's linguo-cultural reality to make the best samples of art and literature accessible to the Armenian reader. Thanks to this, numerous masterpieces have become the property of our reality, which have been written in various languages of the world, and then they have sounded in Armenian as if they had been written in

Armenian. The translation process continues in modern times as well, by means of which new ideas in ideological and artistic spheres penetrate Armenian reality. To understand and describe all this clearly, it is very important to realize that translation, as an exit to other linguocultures and as a perception or Armenization of those linguocultures, is considered an interpretation or an expression of interpretation.

Theoreticians and analysts of translation art have repeatedly dwelt upon difficulties arising while translating a literary work from one language into another and other problems connected with it. In all this system it is extremely important the factor of the recipient language. The point is whether the recipient language is able to allow the translator to reproduce the emotional, imaginary, and language peculiarities of the literary work properly. The flexibility of our language and the high-quality skills of our translators provide such an opportunity.

Keywords: translation thought, cultural reality, sound Armenian, modern times, introduce, describe, interpretation

Ներկայացվել է՝ 08.02.2023թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 20.04.2023թ.